

## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 30 Մայիսի, 2011

Եվրոպան ողջունում է երկխոսությունը Հայաստանում, մինչ իրականացվում է համաներումը՝ Վերջին երեք օրվա ընթացքում գրեթե բոլոր եվրոպական կառույցները բարձր են գնահատել մայիսի 26-ին (2011 թ.) Հայաստանի Ազգային ժողովի կողմից ընդունված և 24 ժամվա ընթացքում իրականացված համաներումը: Այս քայլով կառավարությունը ընդառաջ է գնացել Հայ Ազգային Կոնգրեսի (ՀԱԿ)՝ հիմնական երեք ընդդիմադիր ուժերից մեկի պահանջներին: Համաներումը ՀԱԿ-ի և կառավարության միջև աննախադեպ երկխոսության արդյունքն է: Այս երկխոսության արդյունքում կառավարությունը թույլ է տվել Երևանի կենտրոնական հրապարակներից մեկում՝ Օպերայի/Ազատության հրապարակում ցույցերի կազմակերպումը: Այս զարգացումները համահունչ են ապրիլին Եվրամիության հանձնակատար Ֆրուլեի և արտաքին գործերի նախարար Նալբանդյանի կողմից ստորագրված ԵՄ-Հայաստան «Գործընկերություն հանուն բարեփոխումների» հուշագրի բովանդակությանը: Եվրոպական կառույցները լայնորեն ողջունել են այս զարգացումները [քաղվածքներ]

- «Այս անձանց ազատ արձակումը և 2008 թվականի մարտի իրադարձությունների արդյունքում 10 դժբախտ պատահարների հետաքննությունը վերացնում են քաղաքական միջավայրի կարգավորման վերջին խոչընդոտները և իշխանությունների և ընդդիմության միջև կառուցողական երկխոսություն սկսելու հնարավորություն են ստեղծում: Սա Հայաստանի համար շատ դրական զարգացում է: (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) համազեկուցողներ Հայաստանի մասին, Ջոն Պրեսկոտ և Ալեքս Ֆիշեր)
- «Ես անկեղծորեն ողջունում եմ այս որոշումը, որը ընդդիմության հետ երկխոսության մի նոր փուլ կբացի» (ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի ԱԳ նախարար Անդրոնիուս Աժուբալիս)
- «Ես կոչ եմ անում Հայաստանի քաղաքական ուժերին օգտվել այս առիթից և վերսկսել իրենց երկխոսությունը»: (ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոն)

«Սա հիանալի նորություն է հայ ժողովրդի համար և մի մեծ հաղթանակ է ՀԱԿ-ի և կառավարության համար: Երկու կողմերը կատարեցին իրենց խոստումը՝ բռնելով հաշտեցման ճանապարհը: Հաջորդ լակնուսային թեստը կլինի մայիսի 31-ին կայանալիք ՀԱԿ-ի հանրահավաքը և ապա 2008 թվականի մարտի իրադարձությունների վերսկսված հետաքննության առաջընթացը: Եթե կառուցողական մթնոլորտը շարունակվի ողջ առաջիկա նախընտրական փուլում, ապա քաղաքական դաշտը կարող է վերականգնել իր հանդեպ խարխլված վստահելիության որոշ մասը: Այն կողմը, որն առավել արժանահավատ գտնվի, ձեռք կբերի ավելին»,- մեկնաբանում է Հայաստանի Եվրոպացի Բարեկամներ (ՀԵԲ)-ի գլխավոր քարտուղար դոկտոր Մայքլ Քամբեքը:

2010 թ.-ի նոյեմբերին ՀԵԲ-ի կողմից պատվիրված հետազոտության արդյունքները բացահայտեցին հարցվողների ուժեղ անվստահությունը ողջ քաղաքական դաշտի նկատմամբ, ովքեր

միաժամանակ ընդունում էին, որ Հայաստանը ընդհանուր առմամբ ճիշտ ուղու վրա է: ([http://www.eufoa.org/uploads/Armenia% 20Final% 20Report. pdf](http://www.eufoa.org/uploads/Armenia%20Final%20Report.pdf)). Մայիսի 17 և 18-ին ՀԵԲ-ը առանձին հանդիպումներ է ունեցել Հայ ազգային կոնգրեսի և կառավարության ներկայացուցիչների հետ: Մենք հանգել ենք այն եզրակացության, որ երկու կողմերը դեռևս հիմնովին չեն համաձայնվում 2013 թ.-ին կայանալիք նախագահական ընտրությունների վերաբերյալ: Խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան 2012 թ.-ի ապրիլին:

ՀԱԿ-ը պնդում է, որ այժմ ազատ արձակված կուսակցական ակտիվիստները և 2008 թվականի մարտին Քոչարյանի կառավարության ժամանակ կալանավորվածները քաղբանտարկյալներ էին: Այնուամենայնիվ, Եվրոպայի Խորհուրդը անստույգ ապացույցների պայմաններում դադարեցրեց նրանց այդպես անվանել: Ներկայիս համաներումը վերջինն է նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնած համաներումների շարքում, որոնցից առաջին խոշորագույնը 2009 թ.-ի հունիսին էր (<http://www.eufoa.org/newsroom/14/23>), որին հետևեցին մի շարք անհատական ներումներ՝ կապված 2008 թ.-ի մարտի կալանավորումների հետ:

Եվրոպական Խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկը այսօր հայտարարությամբ հանդես եկավ, որտեղ մեկ նախադասությամբ ողջունեց Հայաստանի զարգացումը և Ադրբեջանում ուրբաթ օրը լրագրող Եյնուլա Ֆաթուկլանի ազատ արձակումը, որը հաջորդեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճռին: «Այս հայտարարությունը թյուրիմացության արդյունք է: Չնայած որոշ թերությունների՝ Հայաստանը ժողովրդավարական երկիր է՝ հանրահավաքներ կազմակերպելու ազատությամբ, գրաքննության չենթարկված մամուլով ու կենսունակ ընդդիմությամբ, և 2008 թվականի ընտրություններից ի վեր Հայաստանում բազմաթիվ բարելավումներ են եղել: Ցանկացած անկախ փորձագետ կհամաձայնվի, որ իրավիճակն Ադրբեջանում ավելի մոտ է Բելառուսին և վերջերս կտրուկ վատթարացել է: Բաքուն պարզապես պորձում է սիրաշահել Արևմուտքին, որն անհամեմատելի է այն ամենին, ինչ մենք տեսնում ենք Հայաստանում», - մեկնաբանել է Քամբեքը:

Հայաստանի եվրոպացի բարեկամներ կազմակերպությունը սիրով կտրամադրի մեկնաբանություններ կամ անհրաժեշտ վերլուծություններ անզերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Եվրոպա-Հայաստան խորհրդի անդամները նույնպես պատրաստակամ են մեկնաբանություններ տրամադրել: Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել մեր քարտուղարություն:

Հայաստանի եվրոպացի բարեկամներ կազմակերպության և Եվրոպա-Հայաստան խորհրդի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել մեր կայքը՝ [www.EuFoA.org](http://www.EuFoA.org).

Լուսանկարները հասանելի են մեր կայքում, ինչպես նաև կտրամադրվեն ըստ պահանջի: Հեղինակային իրավունքի սահմաններում նկարների օգտագործումը թույլատրվում է: Օգտագործումն անվճար է, «Copyright: [www.EuFoA.org](http://www.EuFoA.org)» նշելը՝ պարտադիր: